ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԵՂԱՐՎԵՍՏ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի «01» դեկտեմբերի 2021թ.

Նիստին մասնակցում էին հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Դոլուխանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման մեթոդիկայի գծով) Ռ.Դոլուխանյանը, Գ.Մարդյանը:

Քննարկման է դրված Հասմիկ Հենրիկի Գալստյանի «Չար ոգիները հայ ժողովրդական զրույցներում. տեսակների դասակարգումն ըստ գործառույթների» Ժ.01.05 «Բանահյուսություն» մասնագիտությամբ ատենախոսությունը՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան հայցելու համար:

Հասմիկ Գալստյանի թեկնածուական ատենախոսությունը երկար տարիների գիտահետազոտական աշխատանքի արդյունք է: Դրա վկայությունն են այն բազմաթիվ հոդվածները, որոնք հեղինակը տպագրել է Հայաստանի գիտական պարբերականներում՝ սկսած 2011 թվականից:

Ատենախոսությունը պատասխանում է բանագիտության բնագավառի երկու կարևոր հարցի՝ ա) արդիակա՞ն է արդյոք և բ) բանագիտության մեջ այն լրացնո՞ւմ է որևէ բաց: Այս երկու հարցերն ունեն իրենց պատասխանները հոգուտ ատենախոսի ու նրա ներկայացրած գիտական աշխատանքի:

Ատենախոսությունն անպայման արդիական է, որովհետև այն հավատալիքները, որոնց մասին խոսում է ատենախոսը, դեռ շարունակում են ապրել հայի կյանքում՝ չնայած դարը տեխնիկական հագեցվածության մեջ է, և սատանայի, չար ոգիների գոյությունը թվում է պետք է դիտարկվեր որպես սին առասպել:

Չարի խնդիրը հավերժական թեմա է, և մեզ հասել է կրոնական առաջին պատկերացումների հետ: Չարի խնդիրն առկա է նշանավոր կրոնական սրբազան մատյաններում՝ Ավեստայում, քրիստոնեական Աստվածաշնչում, այն առկա է համաշխարհային դասական գրականության մեջ: Դա հիանալի գիտեր հանճարեղ Թումանյանը, որի գործերից տեղին մեջբերումներ ունի ատենախոսը: Դրանցից մեկը Լոռիում տարածված օրորցագողի հավատալիքն է, որ ներկայացնում է Թումանյանը.

Մի արարած սև ու խավար
Նա նրկատեց սրրտադող,

Եվ ճանաչեց սարսափահար՝
Օրորոցի մի չար գող (էջ 96։)

Մանկանը գողանալու սարսափելի երևույթը հայ բանահյուսության մեջ առկա է դեռ ոսկեդարից։ Խորենացին դրա վկան է. «Եւ զայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպես. Եթէ վիշապազունք գողացան զմանուկն Արտավազդ, և դև փոխանակ եդին» (Մ.Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 190-191)։

Հասմիկ Գալստյանն առաջինն է, որ չար ոգիների դասակարգումը հայ ժողովրդական զրույցներում կատարում է ամբողջական ձևով։ Այդ խնդրին որոշ մանրամասներով ժամանակին անդրադարձել է Ղևոնդ Ալիշանը իր «Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը» մեծարժեք գրքում։

Հասմիկ Գալստյանի ատենախոսությունն ունի կառուցվածքային ճիշտ բաժանում և շատ հարուստ հավելված՝ տպավորիչ գունավոր նկարներով, ատենախոսության առանձին հատվածներին վերաբերող բանահյուսական նյութերով, որոնցում տեսնում ենք, թե բանահյուսական տարբեր ժանրերում՝ աղոթքներում առած-ասացվածքներում, ժողովրդական խաղիկներում, անեծքներում ինչպես է երևում չարին դիմադրելը։ Հիանալի է կազմված «Չար ոգիների անունների բառարանը», որը ուսուցողական և ճանաչողական արժեք ունի։

Ատենախոսության մեջ լայնորեն կիրառված է պատմահամեմատական մեթոդը։

Դև և սատանա եզրույթները զուգահեռվում են տարբեր լեզուներով՝ երևան հանելով երևույթի համամարդկային բնույթը։

Քրիստոնեական կրոնի աստվածաբանները արդեն շատ վաղուց կատարել են երկնային հրեշտակների քահանայապետության դասակարգումը։ Դրա վառ ապացույցը Դիոնիսիոս Արեոպագացու «Երկնային քահանայապետութիւն» աշխատությունն է, որ շատ սիրված էր հայ միջնադարում։

Հասմիկ Գալստյանը ներկայացնում է չար ոգիների դասակարգումը ըստ հայ բանահյուսության։ Բոլոր չար ուժերը հավաքական ձևով ներկայանում են որպես դիվային կամ սատանայական ուժեր։

Ատենախոսը ճշգրտորեն կրկնում է «դև» բառի ընդունված ստուգաբանությունը. «Դևը ինչպես հայկական, այնպես էլ իրանական, արաբական, հնդկական և այլ ժողովուրդների առասպելաբանության մեջ բոլոր տեսակի չար ոգիներին ու գերբնական ուժերին տրվող ընդհանուր, պայմանական անուն է (էջ 28)։ Դիվահարությունը միջնադարում համարվել է հիվանդություն և ինչպես ճիշտ նշվում է ատենախոսության մեջ, արտացոլված է ախտաբարական գրականության մեջ։ Թումանյանը երևույթը տեսանելի ձևով պատկերել է «Լոռեցի Սաքոն» պոեմում, ուր «խոլ պատկերները տգեղ, այլանդակ երևում են աժդահա հովիվ Սաքոյին ու դիվահար անում (տե՛ս Հովհ.Թումանյան,ԵԼԺ տասը հատորով, հ.3, Երևան, 2019, էջ 25)։

Ատենախոսը մանրամասնորեն բացատրում է սատանային բռնելու երեք եղանակները, որոնցից երրորդն ամենատարածվածն է եղել։ Ըստ այդ վերջին տեսակի՝ սատանան նույնիսկ մի քանի տարի կարող էր ծառայել մարդուն։

Մարդու ծնունդը կապված է մի շարք վտանգների հետ: Հատկապես հին ժամանակներում, երբ բժշկությունն այդքան զարգացած չէր, մարդիկ սարսափում էին ծննդկանին խանգարող շատ ոգիներից: Հայկական զրույցներում դրանց անվանում էին Ալ:

Ատենախոսության IV գլխում մանրամասն նկարագրվում են չար ոգիների այլ տեսակներ՝ շվոտը, խլվլիկը, խիպիլիկը:

Բացատրվում են չար ոգիների, ջրի ոգիների ժողովրդական ընկալումները: Այսօրվա հայերենում հաճախ բանավոր խոսքում, օգտագործվում է հատկապես գոռնափշտիկ բառը՝ որպես ուրվականի համարժեք:

Ատենախոսը մանրամասնում է դրա ընկալումը՝ ըստ պատմական Հայաստանի տարբեր հատվածների՝ Շիրակ, Արարատ, Բաղեշ, Սասուն, Արցախ, Նոր Նախիջևան, Համշեն, Գանձակ, Կարին, Վան, Բալու, Ծալկա և այլն:

Հասմիկ Գալստյանը նշում է, թե ինչ ձևերով բանահյուսական նյութերում հայ մարդը փորձել է ծիսական միջոցներով կանխել չար ոգիների ներգործությունը մարդու վրա: Այդ միջոցներից են՝ աղոթքը, խաչակնքումը, հմայիլները, սրբազան մատյանների ընթերցումը և այլն:

Ատենախոսը կատարել է տպավորիչ աշխատանք, օգտվել մեծաքանակ և տարալեզու գրականությունից:

Աշխատանքի հետ կապված՝ կան մի քանի դիտարկումներ.

ա. Վրիպակներ՝

էջ 17. «Հավհաննես» **փխ.**՝ «Հովհաննես»,

էջ 55. ծնթ. 186. «...պատժվում է մարդու» **փխ.**՝ «պատժվում է մարդուց»:

էջ 56. «զաւակներ ունենալ» **փխ.**՝ «զաւակներ ունենալ»:

բ. Ոչ սահուն շարադրանք՝

էջ 57. «...կապված են... բնակլիմայական պայմաններից, ... դիրքից ու տեղավայրից» **փխ.**՝ «...կապված են... բնակլիմայական պայմանների, ... դիրքի ու տեղավայրի **հետ**» // «...կա**խ**ված են... բնակլիմայական պայմաններից, ... դիրքից ու տեղավայրից»,

էջ 94. «... որը արյունակից **չի**» փխ.՝ «որը արյունակից **չէ**»:

գ. Այլք՝

1. Միջնադարյան մատենագրության մեջ դևերի այլաբանական ընկալման (որպես հեթանոսներ) և մեկնության հետաքրքիր օրինակ հանդիպում ենք Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ. «Իսկ երանելին (իմա՛ Մաշտոց) ... ամենքին իրենց հայրենական ավանդություններից ու սատանայական դիվապաշտ ծառայությունից գերեց, շուտ տվեց Քրիստոսի հնազանդությանը: Եվ երբ նրանց մեջ սերմանեց կյանքի խոսքը... դևերը զանազան կերպարանքներով փախան, ընկան Մարերի կողմերը»[1]: «Դև» բառի համար Ա. Մաթևոսյանը ծանոթագրում է. «Հին գրողները (և ոչ միայն մեր

[1] Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1994, էջ 40:

մեջ) քրիստոնյա քարոզիչներից հալածված և իրենց կուռքերի հետ փախչող քրմերին ու կուռքերին անվանում են «դև», իսկ կռապաշտներին՝ դիվապաշտ»[2]:

2. Որոմի մասին մինչ Եզնիկ Կողբացին (Ատենախոսություն, էջ 124) առակում է նախ Քրիստոս (Մատթէոս ԺԳ. 24-30. «Վասն որոմանց առակին»). այս առակը քրիստոնեական գրականության մեջ ընկալվել է տարբեր իմաստներով[3]:

3. Ջրի ոգիների շարքում է քննվում հուշկապարիկը (գլ. հինգերորդ, էջ 133-134) ըստ Ղ. Ալիշանի և այլ ուսումնասիրողների դիտարկումների: Հ. Գալստյանն անտեսում է Ղ. Ալիշանի մի ակնարկ, ըստ որի հուշկապարիկ լատիներեն թարգմանում են Lamia, որ կարող էր դիտարկվել նաև որպես մարդագայլ (էջ 186, ծնթ. 1): Ատենախոսության մեջ այս զուգահեռի մասին անդրադարձ չկա: Այնինչ հետաքրքիր է մարդագայլերի՝ որպես չար ոգիների կապը թե անդրշիրիմյան աշխարհի և թե նորածնին վնասող ոգիների հետ. նկատի ունենալով հատկապես այն, որ հայ ժողովրդական բանահյուսության մեջ պահպանված մարդագայլերի մասին առասպելներն ու զրույցները հնության կնիք ունեն, և արտացոլված են թե՛ միջնադարյան առակագրության (Մխիթար Գոշ) և թե՛ նորագույն գրականության մեջ (Խ. Աբովյան, Աղասու խաղը):

4. Հայերեն ձեռագրի էջանշումը պետք է արվի միօրինակ. Մաշտոցյան Մատենադարանի նույն՝ հմր. 6677 ձեռագրի էջերը հղված են տարբեր կերպ. (էջ 44) նշված է՝ 65-180, նաև՝ 29ա-29բ (այս մեկը պետք է լիներ՝ 29աբ):

5. **Դիվարան** բառի դիմաց փակագծերում մի քանի անգամ նշում է՝ պանդեմիում: Ծանոթագրական այս հավելումը մեկ անգամով կարելի էր սահմանափակել:

Ցանկալի կլիներ, որ նա ծանոթ լիներ նաև ֆրանսիացի նշանավոր հայագետ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրեդերիկ Ֆեյդիի վերջին աշխատությանը, որն առնչվում է իր ատենախոսությանը: Այդ աշխատությունն է «Քրիստոնյա Հայաստանի հմայիլները» (տե՛ս F.Feydit, Amulettes de l'Arménie, chrétienne, Venise, st. Lazare, 1986):

Հասմիկ Գալստյանի աշխատանքը կարելի է օգտագործել որպես հատուկ դասընթացի նյութ՝ «Չար ոգիները հայ բանահյուսության մեջ» թեմայի համար: Այն երաշխավորելի է տպագրելու որպես մենագրություն՝ ներառելով անպայման հավելվածի բաժինը և նրանում եղած գունավոր նկարներն ու բառարանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ «Չար ոգիները հայ ժողովրդական զրույցներում. տեսակների դասակարգումն ըստ գործառույթների» ատենախոսությունը լիովին հաջողված է, և նրա հեղինակն արժանի է ստանալու Ժ.01.05 «Բանահյուսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Որոշումն ընդունված է միաձայն:

Ատենախոսության քննարկման ժամանակ ելույթ են ունեցել հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,

---

[2] Նույն տեղում, էջ 131:

[3] Ավետարանական առակների մեկնություններ, կազմող՝ Լ. Հովսեփյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013, էջ 49-68:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Դոլուխանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման մեթոդիկայի գծով) Ռ.Դոլուխանյանը, Գ.Մարդյանը:

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍ.ՄԵԹ.
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ, ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ,
ԲԱՆ.ԳԻՏ.ԴՈԿՏՈՐ,ՊՐՈՖԵՍՈՐ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Պրոֆ.Ա.Դոլուխանյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԻՐ՝ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ